

ՀԱՄԵՍԱՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ 2014-2015 ԹԹ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՈԼՈՐՏ

(քրեական գործեր, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ)

2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացվել է 4476 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 16292 միջնորդություն *(ընդհանուրը՝ 4476+16292=20768)*:

Ստացված 4476 քրեական գործից ավարտվել է 3100-ը (69,2%):

Ստացված 16292 միջնորդություններից ավարտվել է 15985-ը (98,1%):


(Ընդհանուր առմամբ ավարտվել է 19085 դատական գործ (3100+15985=19085) 91,9%):

Համեմատության կարգով նշենք, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է 4021 քրեական գործ, մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին ու դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 17297 միջնորդություն (ընդհանուրը՝ 4021+17297=21318):

Ստացված 4021 քրեական գործից ավարտվել է 2882-ը (71,7%):

Ստացված 17297 միջնորդություններից ավարտվել է 17205-ը (99,5%):

(Ընդհանուր առմամբ ավարտվել է 20087 դատական գործ (2882+17205=20087) 94,2%):



2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից ավարտված 3100 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3979 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2784 գործով (89,8%) կայացվել է դատավճիռ՝ 3606 անձի նկատմամբ, 253 գործով (8,2%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 307 անձի վերաբերյալ, 63 գործով (2%)՝ 66 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

Համեմատության կարգով նշենք, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարանների կողմից ավարտված 2882 քրեական գործերով դատական ակտ է կայացվել 3799 անձի վերաբերյալ, այդ թվում՝ 2615 գործով (90,7%) կայացվել է դատավճիռ՝ 3511 անձի նկատմամբ, 207 գործով (7,2%) կայացվել է քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում՝ 228 անձի վերաբերյալ, 60 գործով (2,1%)՝ 60 անմեղսունակ անձանց վերաբերյալ կիրառվել է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ:

2015 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 157 ($157:3913*100=4\%$) անձ, որից 110-ը ($110:3913*100=2,8\%$)՝ լրիվ, իսկ 47-ը ($47:3883*100=1,2\%$)՝ մասնակի:

Վերը նշված արդարացվածների վերաբերյալ կայացված 136 դատական ակտերից 66 դատական ակտ (48-ը լրիվ, 18-ը մասնակի)՝ 71 անձի վերաբերյալ (51-ը լրիվ, 20-ը մասնակի), 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ մտել է օրինական ուժի մեջ:

*Համեմատության կարգով նշենք, որ 2014 թվականի ընթացքում լրիվ կամ մասնակի արդարացվել է 125 ($71+54=125$) 3,6% ($125:3511*100=3,6\%$) անձ, որից 71-ը ($71:3511*100=2\%$)՝ լրիվ, իսկ 54-ը ($54:3511*100=1,6\%$)՝ մասնակի:*

2015 թվականի ընթացքում դատապարտվել է 3505 ($3606-110-9=3505$) 97.2% ($3505:3606*100=97.2\%$) անձ (նշված 9 թիվը կազմում է քրեական գործի վարույթը կարճելու արդյունքում արդարացվածի կարգավիճակ ձեռք բերած անձանց թիվը):

2015 թվականի ընթացքում դատապարտված 3505 անձանցից՝

- ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1549 (44,2%) անձի նկատմամբ,

-կալանքի ձևով՝ 265 (7,6%) անձի նկատմամբ,

-կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 156 (4,5%) անձի նկատմամբ:

Վերը նշված թվերի (1549, 265, 156) հաշվարկը կատարվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով:

Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 977 անձի նկատմամբ ($977:3505*100=27,9\%$):

*Համեմատության կարգով նշենք, որ 2014 թվականի ընթացքում դատապարտվել է 3440 ($3511-71=3440$) 98% ($3440:3511*100=98\%$) անձ:*

2014 թվականի ընթացքում դատապարտված 3440 անձանցից՝

- ազատազրկման ձևով պատիժ է նշանակվել 1775 (51,6%) անձի նկատմամբ,

- կալանքի ձևով՝ 251 (7,3%) անձի նկատմամբ,

- կարգապահական գումարտակում պահելու ձևով՝ 231 (6,7%) անձի նկատմամբ:

Վերը նշված թվերի (1775, 251, 231) հաշվարկը կատարվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտերով:

*Պատիժը պայմանականորեն չի կիրառվել 834 անձի նկատմամբ (834:3440*100=24,2%):*

*Այսպիսով, 2015 թվականի ընթացքում՝ 2014 թվականի համեմատությամբ, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացված քրեական գործերի քանակն ավելացել է 455-ով (4476-4021=455) 11,3% (455:4021*100=11,3%), ըստ ավարտված գործերի՝ դատի տրված անձանց թիվն ավելացել է 180-ով (3979-3799=180) 4,7% (180:3799*100=4,7%): Անձանց թիվը, որոնց նկատմամբ պատիժը պայմանականորեն չի կիրառվել աճել է 143-ով (977-834=143) 17,1% (143:834*100=17,1%), դատապարտվածների թիվն աճել է 65-ով (3505-3440=65) 1,8% (65:3440*100=1,8%), իսկ արդարացվածների թիվն աճել է 32-ով (157-125=32) 25,6% (32:125*100=25,6%):*

Հարկ է նշել, որ ինչպես 2014 թվականին, այնպես էլ 2015 թվականին դատապարտված անձանց թվում որոշակի նվազումներով հանդերձ զգալի թիվ են կազմել խարդախության, ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու, դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու, ինչպես նաև զինվորական կարգի դեմ ուղղված հանցագործություններից՝ պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար դատապարտվածները:

Այսպես.

*- 2014 թվականի ընթացքում խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված) դատապարտվել է 115 անձ (դատապարտվածների թվի 3,3%-ը, 115:3440*100=3,3%), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար (ՀՀ քր. օր. 358-րդ հոդված)՝ 110 անձ (դատապարտվածների թվի 3,2%-ը, 110:3440*100=3,2%), ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (ՀՀ քր. օր. 242-րդ հոդված)՝ 109 անձ (դատապարտվածների թվի 3,2%-ը, 109:3440*100=3,2%), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 112-րդ հոդված)՝ 106 անձ (դատապարտվածների թվի 3,1%-ը, 106:3440*100=3,1%):*

*- 2015 թվականի ընթացքում խարդախության համար (ՀՀ քր. օր. 178-րդ հոդված)՝ 89 անձ (դատապարտվածների թվի 2,5%-ը, 89:3505*100=2,5%), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար (ՀՀ քր. օր. 358-րդ հոդված)՝ 101 անձ (դատապարտվածների թվի 2,9%-ը, 101:3505*100=2,9%), ճանապարհային երթևեկության և*

տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար (ՀՀ քր. օր. 242-րդ հոդված)՝ 82 անձ (դատապարտվածների թվի 2,3%-ը, $82:3505*100=2,3\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 112-րդ հոդված)՝ 86 անձ (դատապարտվածների թվի 2,5%-ը, $86:3505*100=2,5\%$):

Այսպիսով, 2015 թվականի ընթացքում՝ 2014 թվականի համեմատությամբ խարդախության համար դատապարտվածների թիվը նվազել է 26-ով ($115-89=26$) 22,6% ($26:115*100=22,6\%$), պետի նկատմամբ բռնի գործողություններ կատարելու համար դատապարտվածների թիվն նվազել է 9-ով ($110-101=9$) 8,9% ($9:110*100=8,2\%$), ճանապարհային երթևեկության և տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելու համար դատապարտվածների թիվը նվազել է 27-ով ($109-82=27$) 24,8% ($27:109*100=24,8\%$), դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու համար դատապարտվածների թիվը նվազել է 20-ով ($106-86=20$) 18,9% ($20:106*100=18,9\%$):

Ի դեպ, զգալի նվազում է արձանագրվել նաև համեմատվող ժամանակահատվածում դիտարկված ներքոհիշյալ հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Զինձառայողների փոխհարաբերությունների կանոնադրային կանոնները ստորադասության հարաբերությունների բացակայության դեպքում խախտելու համար (ՀՀ քր. օր. 359-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 238 անձ, իսկ 2015 թվականին՝ 189, նվազումը՝ 49 ($238-189=49$) անձ (20,6%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2013 թվականին դատապարտվել է 300 անձ:

- Անդամախեղելու, հիվանդության սիմուլյացիայի կամ ապօրինի այլ եղանակով զինվորական ծառայությունը կամ դրա առանձին պարտականությունների կատարումը դադարեցնելու համար (ՀՀ քր. օր. 363-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 59 անձ, իսկ 2015 թվականին՝ 31, նվազումը՝ 28 ($59-31=28$) անձ (47,4%):

- Զինվորական ծառայության պարտականությունները կատարելուց հրաժարվելու համար (ՀՀ քր. օր. 364-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 37 անձ, իսկ 2015 թվականին՝ 18, նվազումը՝ 19 ($37-18=19$) անձ (51,3%):

- Դատալքության համար (ՀՀ քր. օր. 362-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 16 անձ, իսկ 2015 թվականին՝ 7, նվազումը՝ 9 ($16-7=9$) անձ (56,2%):

- Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, դրանց պրեկուրսորների ապօրինի շրջանառությունն իրականացման կամ դրանց ապօրինի իրացման համար (ՀՀ քր. օր. 266-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 65 անձ, իսկ 2015 թվականին՝ 44, նվազումը՝ 21 ($65-44=21$) անձ (32,3%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2013 թվականին դատապարտվել է 107 անձ:

- Սպանության համար (ՀՀ քր. օր. 104-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 38 անձ, իսկ 2015 թվականին՝ 17, նվազումը՝ 21 ($38-17=21$) անձ (55,3%):

- Խուլիգանության համար (ՀՀ քր. օր. 258-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 133 անձ, իսկ 2015 թվականին՝ 115, նվազումը՝ 18 ($133-115=18$) անձ (13,5%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2011 թվականին դատապարտվել է 502 անձ, 2012 թվականին՝ 299, իսկ 2013 թվականին՝ 178:

- Գիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելու համար (ՀՀ քր. օր. 117-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 30 անձ, իսկ 2015 թվականին՝ 19, նվազումը՝ 11 ($30-19=11$) անձ (36,7%):

- Իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելու համար (ՀՀ քր. օր. 316-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 29 անձ, իսկ 2015 թվականին՝ 19, նվազումը՝ 10 ($29-19=10$) անձ (34,5%):

- Ծեծի համար (ՀՀ քր. օր. 118-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 44 անձ, իսկ 2015 թվականին՝ 34, նվազումը՝ 10 ($44-34=10$) անձ (22,7%):

- Գույքը դիտավորությամբ ոչնչացնելու կամ վնասելու համար (ՀՀ քր. օր. 185-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 22 անձ, իսկ 2015 թվականին՝ 12, նվազումը՝ 10 ($22-12=10$) անձ (45,4%):

- Իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար (ՀՀ քր. օր. 375-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 37 անձ, իսկ 2015 թվականին՝ 29, նվազումը՝ 8 ($37-29=8$) անձ (21,6%):

Հիշյալ հանցագործության թվի ներկայացումը հատկանշական է այն առումով, որ 2013 թվականին այս հանցագործության կատարման զգալի աճ էր նկատվել, մասնավորապես՝ 2012 թվականին դատապարտվել է 79 անձ, իսկ 2013 թվականին՝ 101:

- Ծառայության նկատմամբ անփույթ վերաբերմունքի համար (ՀՀ քր. օր. 376-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 15 անձ, իսկ 2015 թվականին՝ 9, նվազումը՝ 6 ($15-9=6$) անձ (40%):

- Պաշտոնեական լիազորությունները չարաշահելու համար (ՀՀ քր. օր. 308-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 22 անձ, իսկ 2015 թվականին՝ 17, նվազումը՝ 5 ($22-17=5$) անձ (22,7%):

Միաժամանակ, աճ է արձանագրվել ստորև ներկայացվող՝ դիտարկված հանցագործությունների համար դատապարտվածների թվում:

Այսպես.

- Գողության համար (ՀՀ քր. օր. 177-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 468 անձ, իսկ 2015 թվականին՝ 506 անձ, աճը՝ 38 ($506-468=38$) անձ (8,1%):

- Առանց իրացնելու նպատակի թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի ապօրինի շրջանառության համար (ՀՀ քր. օր. 268-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 272 անձ, իսկ 2015 թվականին՝ 305, աճը՝ 33 (305-272=33) անձ (12,1%): Հիշյալ հոդվածով ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2012 թվականին դատապարտվել է 408 անձ, իսկ 2013 թվականին՝ 322:

- Փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձևաթղթեր, տրանսպորտային միջոցների պետհամարանիշներ կեղծելու, իրացնելու կամ օգտագործելու համար (ՀՀ քր. օր. 325-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 27 անձ, իսկ 2015 թվականին՝ 54, աճը՝ 27 (54-27=27) անձ (100%):

- Ապօրինի կերպով զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր ձեռք բերելու, իրացնելու, պահելու, փոխադրելու կամ կրելու համար (ՀՀ քր. օր. 235-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 80 անձ, իսկ 2015 թվականին՝ 101, աճը՝ 21 (101-80=21) անձ (26,2%):

- Սուտ մատնության համար (ՀՀ քր. օր. 333-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 47 անձ, իսկ 2015 թվականին՝ 64, աճը՝ 17 (64-47=17) անձ (36,2%):

- Մարդուն առևանգելու համար (ՀՀ քր. օր. 131-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 53 անձ, իսկ 2015 թվականին՝ 69, աճը՝ 16 (69-53=16) անձ (30,2%):

- Կողոպուտի համար (ՀՀ քր. օր. 176-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 51 անձ, իսկ 2015 թվականին՝ 62, աճը՝ 11 (62-51=11) անձ (21,6%):

- Սեքսուալ բնույթի գործողություններ կատարելու համար (ՀՀ քր. օր. 141-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 34 անձ, իսկ 2015 թվականին՝ 43, աճը՝ 9 (43-34=9) անձ (26,5%):

- Ինքնիրավչության համար (ՀՀ քր. օր. 322-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 11 անձ, իսկ 2015 թվականին՝ 19, աճը՝ 8 (19-11=8) անձ (72,7%):

- Ջորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու համար (ՀՀ քր. օր. 361-րդ հոդված) 2014 թվականին դատապարտվել է 71 անձ, իսկ 2015 թվականին՝ 81, աճը՝ 10 (81-71=10) անձ (14,1%):

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող միջնորդություններ

2015 թվականի ընթացքում ՀՀ առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված 16292 միջնորդություններից 14759 (90,6%)-ը վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2452-ը

(16,6%) ($2452:14759*100=16,6\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2452 միջնորդություններից 2263-ը (92,3%) ($2274:2452*100=92,3\%$) բավարարվել է, 11-ը (0,4%) ($11:2452*100=0,4\%$) բավարարվել է մասնակի, 154-ը (6,3%) ($154:2452*100=6,3\%$)՝ մերժվել, իսկ 24-ը (1%) ($24:2452*100=1\%$) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 604 միջնորդություն, որից 112-ը (18,5%) բավարարվել է, 460-ը (76,2%)՝ մերժվել, 27-ը (4,5%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 5-ը (0,8%)՝ 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ 2014 թվականի ընթացքում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացված վերոհիշյալ 17297 միջնորդություններից 15163 (87,7%)-ը վերաբերել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին, որից 2331-ը (15,4%) ($2331:15163*100=15,4\%$) հանդիսացել է կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին միջնորդություն: Կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին 2331 միջնորդություններից 2203-ը (94,5%) ($2203:2331*100=94,5\%$) բավարարվել է, 122-ը (5,2%) ($122:2331*100=5,2\%$) մերժվել, իսկ 6-ը (0,3%) ($6:2331*100=0,3\%$) թողնվել է առանց քննության: Նույն ժամանակահատվածում ՀՀ առաջին ատյանի դատարաններում ստացվել է գրավը որպես կալանավորման այլընտրանքային խափանման միջոց կիրառելու մասին 572 միջնորդություն, որից 99-ը (17,3%) բավարարվել է, 462-ը (80,8%)՝ մերժվել, 9-ը (1,6%)՝ թողնվել է առանց քննության, իսկ 2-ը (0,3%)՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2015 թվականին ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված միջնորդությունների թիվը նվազել է 1005-ով (5,8%), կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելու մասին ստացված միջնորդությունների թիվն աճել է 121-ով (5,2%):

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՎԵՐԱՔՆՆԻՉ ԴԱՏԱՐԱՆ

ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2015 թվականի ընթացքում ստացվել է 3064 վերաքննիչ բողոք՝ 2850 դատական ակտի դեմ (*այսինքն՝ բողոքարկվել է ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 14,9%-ը* ($2850:19085*100=14,9\%$)): Բերված բողոքներից 1402-ով (45,8%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1188 դատական ակտ, իսկ մնացած՝ 1662-ով (54,2%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ

դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 1662 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1188 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1024-ով (86,2%), այդ թվում՝ 691 (67,5%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 276-ը (26,9%) բեկանվել է, 25-ը (2,4%) թողնվել է առանց քննության, 32-ով (3,2%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 276 ակտերից 34-ով (12,3%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան նոր քննության, 242-ով (87,7%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված 1662 բողոքներից (1662 դատական ակտերի դեմ) բավարարվել է 176-ը (10,6%), մերժվել՝ 1286-ը (1286 դատական ակտերի դեմ) (77,3%), 31-ը (31 դատական ակտերի դեմ) (1,9%) թողնվել է առանց քննության, 31-ով (31 դատական ակտերի դեմ) (1,9%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 138-ը (138 դատական ակտերի դեմ) (8,3%) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2850 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 3064 բողոքներից 883-ը (28,8%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 122 (13,8%) բողոքի քննություն 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 761 (883-122=761) բողոքներից 163-ը (21,4%) բավարարվել է, 590-ը (77,5%)՝ մերժվել, 3-ով (0,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 5-ով (0,7%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2014 թվականի ընթացքում ստացվել է 2850 վերաքննիչ բողոք՝ 2563 դատական ակտի դեմ (այսինքն՝ բողոքարկվել է առաջին ատյանի դատարանների կողմից կայացված դատական ակտերի ընդամենը 12,7%-ը (2563:20087*100=12,7%)):* Բերված բողոքներից 1405-ով (49,3%) բողոքարկվել է քրեական գործերով կայացված գործն ըստ էության լուծող 1156 դատական ակտ, իսկ մնացած՝ 1445-ով (50,7%) բողոքարկվել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 1407 դատական ակտ:

Քրեական գործերով բողոքարկված 1156 դատական ակտերով վերաքննիչ վարույթն ավարտվել է 1033-ով (89,3%), այդ թվում՝ 706 (68,3%) դատական ակտ թողնվել է անփոփոխ, 264-ը (25,5%)՝ բեկանվել է, 29-ը (2,8%) թողնվել է առանց քննության, 34-ով (3,4%) վերաքննիչ վարույթը կարճվել է: Բեկանված 264 ակտերից 42-ով (15,9%) գործն ուղարկվել է ստորադաս դատարան՝ նոր քննության, 222-ով (84,1%) ստորադաս դատարանի դատական ակտը փոփոխվել կամ կայացվել է գործն ըստ էության լուծող նոր դատական ակտ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող 1407 դատական

ակտերի դեմ բերված 1445 բողոքներից բավարարվել է 137-ը (բեկանվել է 146 դատական ակտ, որից 9 դատական ակտի դեմ բողոքները բերված են եղել 2013 թվականին) (9,5%), մերժվել՝ 1165-ը (80.6%), 20-ը (1,4%) թողնվել է առանց քննության, 43-ով (3%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 80-ը (40 դատական ակտի դեմ) (5,5%)՝ 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել են անավարտ:

Բողոքարկված 2563 դատական ակտի դեմ բերված ընդհանուր 2850 բողոքներից 785-ը (27,5%) ներկայացվել է դատախազության կողմից, որոնցից 79 (10%) բողոքի քննություն 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Ընթացքը լուծված 706 (785-79=706) բողոքներից 143-ը (20,3%) բավարարվել է, 552-ը (78,2%)՝ մերժվել, 7-ով (0,9%) վերաքննիչ վարույթը կարճվել է, իսկ 4-ով (0,6%)՝ բողոքը թողնվել է առանց քննության:

*Այսպիսով, 2015 թվականի ընթացքում ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում ստացված բողոքների ընդհանուր թիվն աճել է 214-ով (3064-2850=214) 7,5% (214:2850*100=7,5%), այդ թվում՝ քրեական գործերով գործն ըստ էության լուծող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվը նվազել է 3-ով (1405-1402=3) 0,2% (3:1405*100=0,2%), մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքների թիվն աճել է 217-ով (1662-1445=217) 15% (217:1445*100=15%):*

Քրեական գործերով ավարտված վերաքննիչ վարույթների թիվը նվազել է 9-ով (1033-1024=9) 0,9%, անփոփոխ թողնված դատական ակտերի թիվը նվազել է 15-ով (706-691=15) 2,1%, իսկ բեկանվածների թիվն աճել է 12-ով (276-264=12) 4,5%:

Մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ոլորտին և դատական ակտի կատարման հետ կապված հարցերին վերաբերող դատական ակտերի դեմ բերված բողոքներից բավարարվածների թիվն աճել է 39-ով (176-137=39) 28,5%, մերժվածների թիվն աճել է՝ 121-ով (1286-1165=121) 10,4%, առանց քննության թողնվածների թիվն աճել է 11-ով (31-20=11) 55%, վերաքննիչ վարույթի կարճումների թիվը նվազել է 12-ով (43-31=12) 27,9%:

Այսպիսով, բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 214-ով (3064-2850=214) 7,5%, ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների ընդհանուր թիվն աճել է 51-ով ((276+176=452)-(264+137=401)=51)) 12,7%, իսկ մերժվածների թիվը՝ 106-ով ((691+1286=1977)-(706+1165=1871)=106)) 5,7%:

Դատախազության կողմից բերված բողոքների ընդհանուր թիվն աճել է 98-ով (883-785=98) 12,5% (98:785*100=12,5%), այդ թվում՝ ավարտված վերաքննիչ վարույթների արդյունքում բավարարված բողոքների թիվն աճել է 20-ով (163-143=20) 14%, իսկ մերժվածների թիվը՝ 38-ով (590-552=38) 6,9%:

*Այսպիսով, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2015 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 19085 (3100+15985=19085) դատական ակտերից բողոքարկվել է 2850-ը՝ 14,9% (2850:19085*100=14,9%), որից բեկանվել է 444-ը (276+176-8=444) 15,6% (452-8=444, նշված 8 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից կայացված թվով 8 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), այսինքն՝ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2015 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,7% (19085-444=18641:19085*100=97,7%), իսկ բողոքարկված գործերի կայունությունը կազմում է 84,4% (2850-444=2406:2850*100=84,4%):*

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ԶՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2015 թվականի ընթացքում ստացվել է 1455 (ստացված 1269+186 փոխանցված) վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 1056 դատական ակտ:

Բերված 1455 բողոքներից 376-ը (25,8%) վերադարձվել է, 77-ը (5,3%) ընդունվել է վարույթ, 93-ը (6,4%)՝ թողնվել է առանց քննության, 695-ով (47,8%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 10-ով (0,7%) նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայվել և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 10-ով (0,7%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 194 (13,3%) բողոքի ընթացքը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 77 բողոքներից՝

-4-ը (վարույթ ընդունածի 5,2%, ընդհանուր բողոքների 0,3%) մերժվել է,

-38-ը (վարույթ ընդունածի 49,3%, ընդհանուր բողոքների 2,6%) բավարարվել է ամբողջությամբ,

-20-ը (վարույթ ընդունածի 26%, ընդհանուր բողոքների 1,4%)՝ բավարարվել է մասնակի,

-15-ը (վարույթ ընդունածի 19,5%, ընդհանուր բողոքների 1%) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 38 բողոքներից 8-ով բեկանվել է ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1455 բողոքներից 149-ը (10,2%) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 35-ն (23,5%) ընդունվել է վարույթ, 1-ը (0,7%) թողնվել է առանց քննության, 10-ը (6,7%) վերադարձվել է, 66-ով (44,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 37-ի (24,8%) ընթացքը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 35 բողոքներից 13-ը բավարարվել է ամբողջությամբ, 7-ը բավարարվել է մասնակի, 3-ը մերժվել է, իսկ 12-ը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

- Բերված 1455 բողոքներից 1306-ը (89,8%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 42-ը (3,2%) ընդունվել է վարույթ, 92-ը (7%) թողնվել է առանց քննության, 10-ով (0,8%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 366-ը (28%) վերադարձվել է, 629-ով (48,2%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 10-ով (0,8%) նոր հանգամանքի հիմքով դատական ակտը վերանայվել և վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 157-ը (12%) 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 42 բողոքներից 25-ը բավարարվել է ամբողջությամբ, 13-ը բավարարվել է մասնակի, 1-ը մերժվել է, իսկ 3-ը 2015 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում 2014 թվականի ընթացքում ստացվել է 1250 (ստացված 1150+100 փոխանցված) վճռաբեկ բողոք, որոնցով բողոքարկվել է 965 դատական ակտ:

Բերված 1250 բողոքներից 523-ը (41,8%) վերադարձվել է, 77-ն (6,2%) ընդունվել է վարույթ, 144-ը (11,5%)` թողնվել է առանց քննության, 3-ը (0,3%) դիտվել է որպես դիմում, 134-ով (10,7 %) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 189-ը (15,1 %) վերադարձվել է ժամկետով, 178 (14,2%) բողոքի ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Վարույթ ընդունված 77 բողոքներից`

- 14-ը (վարույթ ընդունվածի 18,2%, ընդհանուր բողոքների 1,2%) մերժվել է,

-20-ը (վարույթ ընդունվածի 26%, ընդհանուր բողոքների 1,6%) բավարարվել է ամբողջությամբ,

-35-ը (վարույթ ընդունվածի 45,4%, ընդհանուր բողոքների 2,8%)` բավարարվել է մասնակի,

- 8-ի ընթացքը (վարույթ ընդունվածի 10,4%, ընդհանուր բողոքների 0,6%) ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Ընդ որում, ամբողջությամբ բավարարված հիշյալ 20 բողոքներից 7-ով բեկանվել է վերաքննիչ դատարանի դատական ակտը և օրինական ուժ է տրվել առաջին ատյանի դատարանի դատական ակտին:

- Բերված 1250 բողոքներից 174-ը (13,9%.) ներկայացվել է ՀՀ գլխավոր դատախազության կողմից, որից 34-ն (19,5%) ընդունվել է վարույթ, 78-ը (44,8%) վերադարձվել է, 7-ը (4,1%) թողնվել է առանց քննության, 10-ը (5,7%) վերադարձվել է ժամկետով, 23-ով (13,2%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 22-ի (12,7%) ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 34 բողոքներից 11-ը բավարարվել է ամբողջությամբ, 13-ը բավարարվել է մասնակի, 7-ը մերժվել է, իսկ 3-ի ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

- Բերված 1250 բողոքներից 1076-ը (86,1%) ներկայացվել է դատավարության այլ մասնակիցների կողմից, որից 43-ն (4%) ընդունվել է վարույթ, 445-ը (41,4%) վերադարձվել է, 137-ը (12,7%) թողնվել է առանց քննության, 3-ը (0,3%) դիտվել է որպես դիմում, 2-ով (0,2%) մերժվել է վերանայման վարույթի հարուցումը, 179-ը (16,6%) վերադարձվել է ժամկետով, 111-ով (10,3%) վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվել է, իսկ 156-ի (14,5%) ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ: Վարույթ ընդունված 43 բողոքներից 9-ը բավարարվել է ամբողջությամբ, 22-ը բավարարվել է մասնակի, 7-ը մերժվել է, իսկ 5-ի ընթացքը 2014 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ եղել է անավարտ:

Այսպիսով, 2015 թվականի ընթացքում` 2014 թվականի համեմատությամբ, ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատում ստացված ընդհանուր բողոքների քանակն ավելացել է 205-ով ($1455-1250=205$) 16,4%, բողոքարկված դատական ակտերի թիվը` 91-ով ($1056-965=91$) 9,4%, մերժված բողոքների թիվը նվազել է 10-ով ($14-4=10$) 71,4%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 18-ով ($38-20=18$) 90%, իսկ մասնակի բավարարվածների թիվը նվազել է 15-ով ($35-20=15$) 42,9%:

Դատախազության կողմից բերված բողոքների թիվը նվազել է 25-ով ($174-149=25$) 14,4%, մերժվածների թիվը նվազել է 4-ով ($7-3=4$) 57,1%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 2-ով ($13-11=2$) 18,2%, իսկ մասնակի բավարարվածների թիվը նվազել է 6-ով ($13-7=6$) 46,2%:

Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքների թիվն աճել է 230-ով ($1306-1076=230$) 21,4%: Դատավարության այլ մասնակիցների կողմից բերված բողոքներից մերժվածների թիվը նվազել է 6-ով ($7-1=6$) 85,7%, ամբողջությամբ բավարարվածների թիվն աճել է 16-ով ($25-9=16$) 177,8%, մասնակի բավարարվածների թիվը նվազել է 9-ով ($22-13=9$) 40,9%:

*Այսպիսով, ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2015 թվականի ընթացքում ավարտված գործերով կայացված 2548 ($1024+1662-138=2548$) դատական ակտերից վճռաբեկության կարգով բողոքարկվել է 1056-ը (41,4%), որոնցից բեկանվել է 58-ը ($38+20=58$) 5,5%, այսինքն` ՀՀ քրեական վերաքննիչ դատարանում 2015 թվականի ընթացքում ավարտված գործերի կայունությունը կազմում է 97,7% ($2548-58=2490:2548*100=97,7%$), իսկ*

բողոքարկված դատական ակտերի կայունությունը կազմում է 94,5% ($1056-58=998:1056*100=94,5\%$):

Այսպիսով, քրեական գործերով և միջնորդություններով ընդհանուր կայունությունը կազմում է 97,4% (Քայլ 1-ին՝ ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի կողմից բեկանված դատական ակտերի թիվը՝ 444-ը ($452-8=444$, նշված 8 թիվը կազմում է ՀՀ վճռաբեկ դատարանի կողմից ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի 8 դատական ակտերը բեկանելու և առաջին ատյանի դատարանի դատական ակտերին օրինական ուժ տալու դեպքերը), գումարվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական սպալատի կողմից բեկանված դատական ակտերի թվին՝ 58-ին, ստացվել է 502 բեկանված դատական ակտ: Քայլ 2-րդ՝ ընդհանուր իրավասության դատարաններում ավարտված դատական ակտերի թվից՝ 19085-ից, հանվել է բեկանված դատական ակտերի թիվը՝ 502-ը, ստացվել է 18583, այսինքն՝ 18583 դատական ակտ մնացել է օրինական ուժի մեջ, ուստի դատական ակտերի ընդհանուր կայունությունը կազմում է 97,4% ($19085-502=18583:19085*100=97,4\%$):

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

2015 թվականի ընթացքում ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում ստացվել է 117654 քաղաքացիական գործ, որից՝

- 6385 գործով (5,4%) հայցադիմումը վերադարձվել է,

- 240 գործով (0,2%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,

- 110989 (94,3%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ,

- 40 (0,1%) հայցադիմումի վերաբերյալ 30.12.2015թ. դրությամբ որոշում չի կայացվել:

Վարույթ ընդունված 110989 գործերից՝

- 71293-ով (64,2%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 54620-ը (վճիռների 76,6%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 6666-ը (վճիռների 9,3%), հայցի մերժմամբ՝ 3048-ը (վճիռների 4,3%), վարույթի կարճմամբ՝ 6959-ը (վճիռների 9,8%), ընդ որում՝ կարճված վճիռներից 1033-ով (վճիռների 1,4%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

- 56 հայց թողնվել է առանց քննության,

(ընդհանուր առմամբ կայացվել է 77974 դատական ակտ՝ 6385+240+71293+56),

- 337 գործով կայացվել է գործն ըստ ընդդատության ուղարկելու մասին որոշում, 150 գործերով կայացվել են մեկ վարույթում միացնելու մասին որոշումներ,

- 39153-ը՝ (ստացված գործերի 33,3%, վարույթ ընդունված գործերի 35,3%) անավարտ է:

Համեմատության կարգով նշենք, որ ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում 2014 թվականի ընթացքում ստացվել է 85772 քաղաքացիական գործ, որից՝

- 5112 գործով (6%) հայցադիմումը վերադարձվել է,
- 248 գործով (0,3%) հայցադիմումի ընդունումը մերժվել է,
- 80412 (93,7%) գործով հայցադիմումն ընդունվել է վարույթ:
Վարույթ ընդունված 80412 գործերից՝

- 46828-ով (58,2%) կայացվել են վճիռներ, այդ թվում՝ հայցի լրիվ բավարարմամբ՝ 35493-ը (վճիռների 75,8%), հայցի մասնակի բավարարմամբ՝ 3442-ը (վճիռների 7,3%), հայցի մերժմամբ՝ 2654-ը (վճիռների 5,7%), վարույթի կարճմամբ՝ 5239-ը (վճիռների 11,2%), ընդ որում՝ կարճված վճիռներից 1003-ով (վճիռների 2,1%) հաստատվել է կնքված հաշտության համաձայնությունը,

- 36 հայց թողնվել է առանց քննության,


(ընդհանուր առմամբ կայացվել է 52224 դատական ակտ՝ 5112+248+46828+36),

- 312 գործ ուղարկվել է ըստ ընդդատության, 76 գործ միացվել է մեկ վարույթում,
- 33160-ը՝ (վարույթ ընդունված գործերի 41,2%) անավարտ է:

*Այսպիսով, 2015 թվականի ընթացքում առաջին ատյանի դատարաններում քաղաքացիական գործերի թիվն ավելացել է 31882-ով (117654-85772=31882)՝ 37,2%-ով (31882:85772*100=37,2%): Հայցադիմումի ընդունումը մերժելու մասին որոշումների թիվը նվազել է 8-ով (248-240=8)՝ 3,2%, վերադարձված հայցադիմումների թիվն ավելացել է 1273-ով (6385-5112=1273)՝ 24,9%:*

2015 թվականի ընթացքում կայացված 71293 վճիռներով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1033-ով՝ 1,4%-ով, այսինքն՝ մոտ 69 քաղաքացիական գործից 1-ն ավարտվել է հաշտության համաձայնությամբ, 2014 թվականի ընթացքում կայացված 46828 վճիռներով կողմերի միջև հաշտության համաձայնություն է կնքվել 1003-ով՝ 2,1%, այսինքն՝ կողմերի միջև հաշտության համաձայնությամբ ավարտված գործերի թիվը նվազել է:

